

ՄԵԼԿ

Հարեկան գինը 10 բուրդ, կէս տարվանը 6 բուրդ, Առանձին Համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմայն Կարագրատան մէջ:

Օտարաբաղադրելի գրվում են ուղղակի
Тифлиса. Редакция „Мелка“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Նախի կիրակի և սոս օրերից)

Հայտարարութիւն ընդունվում է ամէն լիգուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խաբանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Կանայք-բժշկներ: Ներքին տեսչութիւն: Վերջին խօսք Յ. Նազարեանցին: Ներքին լուրեր: Արտաքին տեսչութիւն: Պրանսիա: Վերջին հետազոտումներ: Յայտարարութիւններ: Կանայք-բժշկներ: Վարաբաղի թեմը և նրա կալուածական խնդիրը:

ԿԱՆԱՅԲ-ԲԺՅԱՆԵՐ

Ռուսաց պաշտօնական լրագիրը հաղորդում է որ կանայք, որոնք բժշկութեան ուսում են վերջացնում Ս. Պետերբուրգում հիմնված բժշկական իգական դպրոցում իրաւունք են ստանում բժշկական պրակտիկա ունենալ: Նրանք ստանում են կառավարութիւնից սահմանված մի առանձին նշան, որ կրելու են կուրծքի վրա և որ նրանց պրակտիկայի իրաւունք է տալիս:

Ուրեմն մենք կունենանք Ռուսաստանում կանայք բժիշկներ: Դարձեալ մի նոր ասպարէզ է

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՂԱՐԱԲԱՂԻ ԹԵՄԸ ԵՒ ՆՈՐԱ ԿԱԼՈՒՄԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Հայի և առհասարակ բոլոր ուսուցիչների սաստիկ թանկութիւնը, մորեկը, յաճախ սպանութիւնները, մեր վանքի եղբայրը ողորմելի վիճակը, այս բոլոր հանգամանքները առժամանակ մոռացնել էին տուել մեզ ուրիշ բոլոր թէ տեղական և թէ վիճակի վերաբերեալ կարևոր ազդային հարցեր: Դարաբաղի ահագին թեմը առատ, անսպասելի նիւթ կարող էր մատակարարել ազգային լրագրութեան և շատ հետազոտութիւնների համար դուռն կարող էր բացանել, ազգային պատմութեան էջերը մի հարուստ դանձով կարող էր դարձրել, եթէ լրագրութիւնը Շուշում և այդ թեմի գոնէ գլխաւոր գիւղերում մի մի մշտական թղթակից ունենար: Սակայն այս նամակով ևս միայն կամենում եմ խօսել մի այնպիսի խնդրի վրա, որը դուռն չառնիր ստեղծելով թէ, բայց իմ կարծիքով, այնքան անհրաժեշտ է, այնքան ծանրակշիւ է, որ լիցիւզ պէտք է ամբողջ Ռուսաստանի հայ մամուլը և մտածող հայ դասի ուշադրութիւնը գրաւէր: Դա Դարաբաղի թեմի ազգային կալուածների խնդիրն է, դա մի ազգային այնպիսի ժառանգութեան և հարստութեան մասին է, որ ոչ մի հաստատութիւն, ոչ նոյն իսկ Ս. Եւմովածինը իր բոլոր կալուածներով, ոչ Ներսէսեան դպրոցը և ոչ Գարեգին Մուրադեան վարժարանը կարող են մրցել: Եւ հաւատարմացած եմ սակայն, որ ոչ հայ պարբերական մամուլը, ոչ նոյն իսկ տեղական ժողովուրդը տեղեակ չեն, թէ Դարաբաղի հոգևոր դպրոցը մի այնպիսի ահագին, թէ և դեռ անմշակ և անարդիւնաբեր, հարստութեան տէր է, որ նորանով ոչ թէ միայն մի միջնակարգ հոգևոր դպրոց, այլ և մի ամբողջ համալսարան կարելի է պահպանել: Երբ ասեմ, որ այդ դպրոցը իր հիմնադիր հանգուցեալ Բաղդասար միտրապոլիտից իբրև ժառանգութիւն ստացել է 200 հազար դեռահասուն

բացվում կանանց անկախ աշխատանքի համար:

Բայց մեր հայ օրիորդները օգուտ կը բաղեն արդեօք այդ նոր և գեղեցիկ ասպարիզից: Մինչև այժմ ոչ մի հայ աղջիկ չը կայ Ս. Պետերբուրգի իգական բժշկական դպրոցում:

Մեր հայ օրիորդները երբ անկախ աշխատանքով են կամենում ապրել, ընտրում են իրանց համար անպատճառ վարժուհու պարապմունքը: Նրանք կարծում են, երևի, որ ուրիշ որ և է անկախ աշխատանք վայել չէ հայ կանանց համար:

Մի՞թէ մեր օրիորդները դեռ նախապաշարմունքներ ունեն: Ոչ, մեր կարծիքով եթէ մեր օրիորդները փախչում են իգական անկախ պարապմունքներից, այդ նախապաշարմունքի պատճառով չէ, այլ այն պատճառով է, որ մեր օրիորդները անպատրաստ են մի

որ և է սիստեմական, ծանր, տոկուն աշխատանքի համար, անընդունակ են տեղական, ծանր մտաւոր պարապմունքների:

Ինչքան հայ օրիորդներ անգործ շրջում են Թիֆլիսի մէջ, բայց ոչ մէկը չի մտածի պարապել հարցաքննութեանը պատրաստվել և գնալ բժշկութիւնը սովորելու համար: Նրանց նպատակն է միմիայն որքան կարելի է շուտ պրակտիկա աւելի ոչինչ:

Մենք չենք մեղադրում մեր Թիֆլիսի և առհասարակ կովկասեան հայ օրիորդներին. նրանք ապրում են մի նեղ, անտարբեր, անգործ, ամեն առաջագիմութեան թշնամի շրջանում և այդ մեռած շրջանը ներգործութիւն ունեցաւ: Բայց ի՞նչ պէտք է ասենք Ս. Պետերբուրգի կամ Մոսկովայի մեր հայ օրիորդների մասին: Սրանք ապրում են աւելի զարգա-

ցած հասարակական շրջանում, աւելի միջոցներ ունեն ձգտել դէպի լայն մտաւոր կեանքը, ուրեմն գոնէ նրանք, մայրաքաղաքների մեր հայ օրիորդներից ոմանք միտնէին բժշկական դպրոց և դորանով ապացուցանէին որ հայ կինն էլ ընդունակ է անկախ աշխատանքի, ընդունակ է բժշկական պարապմունքի:

Նյդ տեսակ դժբաղդ դիպուածներ, ինչպէս սով կամ հիւանդութիւններ մեր արիւնակից եղբայրների մէջ, դիպուածներ, որոնք դեռ ևս կարող են կրկնվել, ո՞վ գիտէ զուցէ աւելի էլ մեծ սաստկութեամբ, մեզ համոզում են, որքան անհեռատես է մեր հայ հասարակութիւնը...

Որքան լաւ, որքան օգտուէտ կը լինէր այդ տեսակ դիպուածներում՝ որ մենք հայերս էլ ունենայինք կանայք բժիշկներ:

Դժբաղդապէս հայի յատկու-

թերացողը, խնդիրը շատ ծանրակշիւ է, ուստի և մի քանի բացատրութիւնների կարօտ:

Այդ կալուածը որ խօթա, Գանձասար, ս. Թաւր, Պտիկ, ս. Գէորգ, Ամառաս և Ղևնդեանց վանքերին պատկանեալ հոգևորից և անտառներից է բաղկանում, մի ահագին տարածութիւն, ինչպէս յիշեցինք, աւելի քան 150 հազար դեռահասուն տեղ է բռնում: Յատկայցնել այդ բոլոր յիշեալ վանքերին և դարձնել վանքապատկան սեպականութիւն, սկսել կառուցանել նոր առաջնորդարան և ազգային հոգևոր դպրոց—այդ ամենը հանգուցեալ Բաղդասար միտրապոլիտին ենք պարտական: Բաղդասար արքեպիսկոպոսը մի հասարակ և տգէտ հոգևորական էր. նա զուրկ չէր մինչև անգամ լէվմիսնի վարդապետներին շատերին յատուկ ակտից—կաշառակերութիւնից, բայց նա իր ստացած բոլոր փողերը, մինչև անգամ իր հայրական Հասան-Ջալալեան ցեղի սեպականութիւնից ստացած եկամուտները նա գործ էր անում ուսումնարանի վրա: Այդ հասարակ, պարզ մարդը քաջ կերպով հասկացել էր, որ ուսումնարանի գոյութիւնը յաւերժացել էր, որ ուսումնարանի սեպականութիւնը և առաջ նորան նիւթապէս ապահովայնել: Եւ նա այդ իր հասկացածը գործով ևս կատարեց և դեռ բազանց բոլոր մինչ այժմ յայտնի ազգային բարեարարներից: Նա թողեց ուսումնարանին մի այնպիսի դրամագլուխ—այն ևս կալուած—որ մշտնջանաւոր է և անսպառելի և որի եկամուտով ամբողջ Արցախի թեմը կարող էր ուսումնարաններով ծաղկել: Եւ մի այդպիսի բարերար, մի այդպիսի բարի հովիւ այսօր մոռացված է Շուշու երախտամոռ ժողովուրդից: Եթէ Թիֆլիսի ժողովուրդը սրբազան պարտաւորութիւն է համարում տօնել ամեն տարի Եփէնդեանցի յիշատակը 100 հազար բուրդ ընծայելու համար, որքան ուրեմն մեծ պարտաւորութիւն պիտի լինի շուշեցիների համար տօնելու նրա թողածը տասնապատիկ աւելի է քան Եփէնդեանցիները: Բայց յամօթ շուշեցիների ոչ մի տարի, ոչ մի եկեղեցում մի հոգեհանգիստ անգամ չէ կատարվել և չէ կատարվում ի յիշատակ մի այդպիսի երեկել բարերարի: Դրա պատճառը, մեր կարծիքով, այն է, որ իրենք շուշեցիք չը գիտեն ոչինչ այդ կալուածների մասին, ըստ որում

մինչ այսօր նոքա մի չօգտիւն օգուտ չեն տեսել այդ կալուածներից ուսումնարանի համար և վերջինս նիւթական դրուժեան կողմից միշտ ամենաթշուառ վիճակի մէջ է եղել: Ինչպէս ըստ մեծի մասին պատահում է մեր ազգային սեպականութիւնների հետ, նոյնպէս և Դարաբաղի ազգային կալուածները դարձել են զանազան արկածային դիրքերի, առաջնորդների, կոնսիստորականների և հոգաբարձուների հարստանալու մի աղբիւր: Բաղդասար արքեպիսկոպոսի մեռելուց յետոյ, այդ կալուածները, իբրև վանքապատկան, ընկնում են հոգևոր իշխանութեան ձեռքը:

Ներսէս կաթողիկոսը թէ և շատ չէր համակրում Բաղդասարին, բայց գնահատելով նորա արած գործը, մի փոքր ժամանակ հետևում էր բարեկարգել այդ կալուածները, բայց, ի հարկէ, նա անկարող էր թեմական առաջնորդների յափշտակութիւնից դեմ պահել: Այս վերջիններից միայն Գէորգ Վեհապետեանը աշխատում էր կալուածների մասին և դատաստանական կերպով հաստատում էր նոցա մի քանիսի վանքապատկան լինելը, ըստ որում Բաղդասարի մահից յետոյ, զանազան հայ և թուրք բեկեր սկսել էին յափշտակել: Ամենասատիկ հարուստ այդ կալուածները ստացել են Սարգիս Եպիսկոպոսի առաջնորդութեան ժամանակ: Ազգային ժառանգութիւնները սրբազանի ազգականների, փոքրաւորների, իր արքանականի իրեն համախոհ հոգաբարձուների առատ եկամտի աղբիւր էին դարձել, ուստի և ուսումնարանը թէ բարոյապէս և թէ նիւթապէս ստորացել և մի ողորմելի կերպարանք էր ընդունել: Պորտաբոյժ և հացկատակ մարդերի մի ամբողջ խումբ իբրև դիւտայի գաղաններ թափվել էին խեղճ կալուածների վրա և անպարտաւոր լափում կլանում էին: Այստեղ կոնսիստորիայի քարտուղարը ուսումնարանապատկան հոգի վրա այգիներ է ձգում, այնտեղ Հասան-Ջալալեան ցեղի անդամները սեպականացնում են իրենց դանազան անտառներ, վարելահողեր և ամբողջ տարիներ ոչ մի անձ, ոչ մի հոգաբարձու դուրս չէ դալիս, որ ցոյց տար թէ այդ հողերը պատկանում են ուսումնարանին և յետ լուրէր, և երբ անցնում է 10 տարի, արդէն օրէնքի զօրութեամբ յափշտակչները դառնում են ազգային ժառանգութիւնների

Թիւնն է երբեք չը մտածել ապագայի մասին:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Վ.ԵՐԶԻՆ ԽՕՍԲ Պ. ՆԱԶԱՐԵԱՆԵՐ

Պ. Նազարեանց: Դուք չարաչար սխալվել էք, կարծեմ որ ես կամեցել եմ ձեզ հետ պոլեմիկայով զբաղվել, ես դրա ցանկութիւնը երբեք չեմ ունեցել և չունեմ էլ: Իմ միակ ցանկութիւնն էր՝ ցոյց տալ հասարակութեան որ գրքերի քննադատութիւնը ձեր և ձեզ նմանների գործը չէ:

1) Ես անուանել եմ տգէտ (իսկ այժմ աւելի համարձակ միւսնոյն կանեմ) մի մարդուն, որը չիմանալով ամենահասարակ ուսման բաները՝ իշխանութիւնը, համարձակվել էր այդ լեզուի ոճի վրա դատողութիւններ անել:

2) Կարծեմ, մի մարդ, որը հրապարակապէս յայտնում է, որ իր (քննադատի) գործն է ամբողջ հայ գրականութեան ուղղութիւն տալը (տե՛ս «Մեղու» № 40 «Երկրորդ» վերնագրով յօդուածը), պէտք է կարմիր, երբ նրան ցոյց են տալի, որ նա ինքը ուսման բաները չէ հասկանում, իսկ ուրիշներին մի և նոյն բաների թարգմանութիւնը ուղղում է: Վերջին յօդուածում դուք ինձ ասում էք, որ դուք դրա համար չէք կարմրում: Երբ աշխատանք, ես այդ առաջուց դիտելիս...

3) Ասացէ՛ք, խնդրեմ, թէ մի մարդ, որը (ձեր կարծիքով) իր մայրենի լեզուի կամ լեզուի անդամ ծանօթ չէ, կարողացել է ցոյց տալ ձեզ ձեր արած սխալ նկատողութիւնները հայերէն լեզուի վերաբերութեամբ, ինչ կը լինէր ձեր հայրը, եթէ

այդ պաշտօնը յանձն առնէին մեր հայկաբանները...

4) Եթէ ես ասում եմ. «Պ. Յ. Նազարեանցը կաշիից դուրս է եկել իր քննադատութիւնը պաշտպանելու համար, բայց... և այլն» դրանից, յուսով եմ, մենք չը պէտք է հասկանանք, որ Նազարեանցը իսկապէս կաշուց դուրս է եկել և առանց կաշու է մանգալի: Նմանապէս, եթէ հայրը դիմել է աղջկան և ասել է. «Դու նեղրից ինչ պէտք է շինես», (կարծեմով, որ նեղրին կարելի է ամեն տեսակ խաղալիք դարձնել աղջկայ ձեռքում), չը պէտք է կարծել, որ նեղրից իսկապէս կարելի է խաղալիք շինել: Դժուար հասկանալու է, չէ՞, պ. Նազարեանց...:

5) Զը գիտեմ ինչ է ուղղում ասել պ. Նազարեանցը, ասելով. «մտղը ակամայ մտածում է, թէ արդեօք ինչ շարժառիթ ունէր պարոնը (այսինքն՝ ես) մի պաշտպանողի գեր յանձն առնելու... Սոյ տեսակ կասկածելի խօսքերը պատիւ չեն բերում ոչ մի ազնիւ գրողին: Կարծես, պ. Նազարեանցին յայտնի չէ, որ Գաբ. Միրզոյեանցը ա՛յն փոքրիկ խմբի կազմողներից մէկն է (այդ կարող էր պ. Նազարեանցը գիտենալ լրագրութիւնից), որի աշխատութեան արդիւնքն էր ի դէմ յարձակվում է մեր երեկին քննադատը: Ասացէ՛ք, խնդրեմ, ինչ կար դարմանալու, եթէ Միրզոյեանցը այդ աշխատութիւնների պաշտպան (Պ) հանգիստացաւ:

6) Մենք զարմանում ենք, թէ ինչ աղբիւրներից յայտնի է պ. Նազարեանցին, որ կանոնաւոր խմբագրական մասնաժողովը ի պատիւ օրինորդի չէ կամեցել թերապատար թողնել այն գործը, որ ընկերութեան կազմելուց առաջ է սկսված: Թող յայտնի լինի պ. Նազարեանցին, որ ընկերութեան պաշտօնապէս յայտնված էր, որ եթէ խմբագրական մասնաժողովը թողնումս եղբոր տակը արժան չի համարի ընկերութեան հրատարակութեանց անուն կրելու,

այդ գրքով կարող է սպառնալի և սուսնց ընկերութեան միջոցներին:

Դուք, պ. Նազարեանց, զրոյարտում էք մի նորակազմ ընկերութեան խմբագրական մասնաժողովի անդամներին, որոնք իբր թէ հէնց սկզբից սկսել են ուժ և ինչ խաթ պահել և ի լոյս ընծայել անարժան գրքով: Սոյ պոլիսի մի բան պատիւ չը պէտք է բերէ ոչ մի ընկերութեան, որը գործ է ածում հասարակական միջոցներ:

Արժեքն արդեօք ձեր յօդուածի միւս կէտերը պատասխանին թէ ոչ, թող ուրիշները դատեն:

Զարմանքով կարդացի «Մեղու»-ի № 43-ում դէպի ինձ ուղղած մի քանի խօսքերը պ. խմբագրի կողմից: «Մեղու»-ի պ. խմբագիրը իմ ձեռն անձամբ չեմ կամենում «Մեղու»-ն «Մշակ»-ի մէջ կուռնել նորոգելու միջոց դառնալու» խօսքերից այն եզրակացութեան է հասել, իբր թէ՛ ես ձգտել եմ խնամապահալի պաշտօնին «Մեղու»-ի վրա: Զարմանալի լոգիկա... չէինք սպասում:

«Ինչ է կարծում պ. Գ. Միրզոյեանց, ասում է «Մեղու» պ. խմբագիրը, որ և է ազնիւ և իր պատիւ ճանաչող խմբագրութիւն կը համաձայնէր այդպիսի մի հոգաբարձութիւն ունենալու իր վրա...», իսկ մենք կը գիմենք նրան հետեւալ հարցով.

«Ինչ է կարծում «Մեղու»-ի պ. խմբագիրը, որ և է ազնիւ և իր պատիւ ճանաչող հայ լրագրի խմբագրութիւն թող կը տայ զանազան Նազարեանցներին իր լրագրի միջոցաւ. ձգտել խնամապահալի պաշտօնին ամբողջ հայոց գրականութեան վրա...»

Գաբ. Միրզոյեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Լսում ենք որ Ս. Պետերբուրգի ֆրանսիական դեսպան զեներալ Դանգի ճանապարհորդում է այժմ Անդրկովկասում և այս օրերս վերադառնալու է Բորժոմ:

Գրիգոր Արծրունու դասախոսութիւնը «Սովորական» Բարձրագոյն հրամանը Ս. Պետերբուրգի Նիկոլայեվսկայա հիւանդանոցի մէջ բժշկականութեան ուսումը աւարտող կանանց յատկացնել կուրծքի առանձն աշխատանքի պրակտիկա ունենալու իրաւունքի համար: Այդ արձաթէ նշանի մէջ տեղ գրված են ՅԷ. և Բ. տառերը (женщина врач, բժիշկ-կին): Այն կանայք, որոնք բժշկականութեան դասերը լսելուց յետոյ ստացել են անկախ պրակտիկայի իրաւունք, պարտաւոր են նրանց յատկացրած այդ նշանը կուրծքի աջ կողմը կրել:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՍՈՒԹԻՒՆ

Լրագրիների մէջ կարգում ենք հետեւալ տեղեկութիւնները:

Կղերական կուսակցութիւնը, որի դէմ ուղղված էին մարտի 29-ի հրամանները, վճռեց, որ եղուիաներին արտաքսելու օրը այնպիսի օր դարձնի, որի «անցքերի» մասին խօսի և դատողութիւններ տայ ամբողջ Ներսիսյան: Սոյ կուսակցութիւնը եղուիաներին արտաքսելու անցքը այնպիսի ձևերով շրջապատեց, որ Ֆրէյդիէի միսիստրութեան բոլոր աշխատանքները իր վճիռը առանց աղմուկի իրագործելու մասին իրող անցան: Կղերականները հասան իրանց նպատակին: Այժմ ամբողջ Ներսիսյան իւրաքանչիւր անկիւնում խօսում են եղուիաների մասին, այսինքն այն եղբայրութեան մասին, որ միշտ հակակրկի է եղել եւրոպական հասարակութեան փոքր ի շատեւ զարգացած մասի համար: Խօսելը բաւական չէ, այդ հասա-

ռ. անվտանգութիւն տարածելով ժողովրդի մէջ, ամենայն կերպով բարեկարգէր ուսումնարանը և վերականգնէր այդ վտանգութիւնը:

Արիստակէս վարդապետը իր եկած օրից սկսել է ուշադրութիւն դարձնել կալուածական խնդրի վերա և յաջողել է շատ բան անելու, բայց այդու ամենայնիւ իր բոլոր աշխատութիւնը կալուածաների մասին կարելի է ասել բոլորովին ապարդիւն են անցել: Նա աշխատել է համարել հողաբարձուներին, որ այդ կալուածները յափշտակութիւնից պահպանելու և նոյն շահերը դատաստանի առաջ պաշտպանելու համար, ուսումնարանը պէտք է ունենայ մի օրինաւոր փաստաբան և նշանակել է տուել երդուեալ փաստաբան պ. Ասատրեանին տարեկան 1500 ռուբլ ռոճիկով, բայց մեր պարոն երդուեալ փաստաբանը ահա ամբողջ 4 տարի ուտելով ամբողջ հարկւարութիւնը թշուառ հայ օրերի և աղքատների փողը և ամենայնպէս առիթում հասկացնել տալով հողաբարձութեան թէ նա այդ (փողակերութիւնը) անում է միայն դրդված լինելով աղքատիւական զգացմունքից, ոչինչ մի երեւելի բան չէ յառաջացրել կալուածների վերաբերմամբ և նոյն իսկ այս քանի օրերս, երբ հողաբարձութիւնը հեռագրում է նորան Գանձակ, որ չտապէ զայ, ըստ որում այժմ երկրաշափը եկած լինելով, ամենակիրթիկական վարկեան է, նա, այդ աղքատներ հայ երիտասարդը, հրաժարվում է դատուց, անձնական շատ զբաղմունք ունենալու պատճառով... Երեւի պ. Ասատրեան մտածում է, ինչ կայ, ես ևս ազդի որդին եմ, ամենքը ուտում են, ինչ կը լինի մի 6 հազար ևս ես ուտեմ: Եւ այդ մարդը, նկատել պէտք է, դեռ ազնիւ փաստաբաններից միմէն է համարվում...: Փաստաբան նշանակելուց յետոյ, Սեդրակեանը հողաբարձուներին մատնացրել լինելով, նշանակում է պ. Դանիէլ-բէկեանին կալուածների ընդհանուր կառավարիչ, բաւականին մեծ ռոճիկ տալով նորան և բոլորովին հաւատարմութեան մասին, թէ և հողաբարձուները քաջ գիտէին, որ մի արտաքսված պոլիցիական, որպիսին էր պ. Դանիէլ-բէկեան, չէր կարող յարմար լինել, բայց մի տարուց յետոյ, այդ կառավարիչը բոլոր ռոճիկը լրովին ստանալով, միայն 700 ռուբլ եկամուտ է ցոյց տալիս, այն ևս ոչ թէ

բակուլները պահարանում է փրանսիական հանրապետութեան կառավարութեան գործունէութիւնը: Նկուխները յանկարծ հետաքրքիր դարձան: Նրանց խղճում են իբրև փրանսիական հանրապետութեան անհամբերողութեան պատճառով տանջված են: Ինչ որ անցաւ մոռացված է և եթէ իրանց եղբիւնները աւելի խելօք և հեռաւ տես չը լինէին այն մարդկանցից, որոնց նրանք յիմարացրել են, նրանք կարող էին երևակայել, որ հէնց որ իրանք կը հասնեն Եւրոպական որ և է միապետութիւն, նրանց բաց գրկերով կընդունեն, չը բացառելով և այն երկիրները, որտեղից նրանք մի ժամանակ արտաքսուել են աւելի մեծ խտութեամբ, քան թէ իրան այժմ թոյլ է տուել Ֆրէյսինէի միխտարութիւնը:

Ինչպէս Փարիզում de Sévres փողոցում, նոյնպէս և այն քաղաքներում, որտեղ կային եղբիւններ, այդ օրը խաղացած կոմեդիան աննմանելի արհեստով և ծարպիկութեամբ էր պատրաստված: Նկուխների արտաքսման մասին դեռ մի շարքով առաջ սկսեց խօսել հակահանրապետական մամուլը և այնպիսի խիստ ձեռով, որ չափազանց գրգռում էր ընթերցողներին ջղերը: Կղերականութեան գրգռութիւնները մի րոպէ հանգստութիւն չուներին: Սուրբ հայրերի հետ միասին նրանք տեղափոխ եւանդով պատրաստում էին արտաքսման պատկերները: Նախագիծը մանրամասն արարած մտածված էր և խնկութեամբ կատարված: Հանձնարար metteurs en scène (քեմ պատրաստողները) ոչ մի մանրամասնութիւն չէին մոռացել, նախատեսել էին անսպասելի դէպքերը:

Փարիզի եղբիւնների զլխաւոր բնակարանի մէջ, de Sévres փողոցում, տուն № 35-ի մէջ պատրաստված էր ամենանշանաւոր ներկայացումը: Այդ բնակարանի մշտական բնակիչները յունիսի 30-ի համար մնացին միայն նրանք, որոնք զանազան պատճառներով, իրանց դրութեան առանձնութիւններով,

կարող էին դժուարացնել կառավարութեանը: Միաբանութեան զլխաւորի կարգաբերութեամբ առաջուց հեռացրած էին այն հայր սուրբները, որոնք չափազանց բարկացկոտ բնաւորութեան տէր, չափազանց առողջական, կամ հակակրկի դէմքի տէր էին: Բնակարանի մէջ մնացել էին տարիներէ ձանձրացած ծերերը, թոյլերը, համբերող և համակրելի դէմքեր ունեցողները, մի խօսքով այնպիսիները, որոնք իրանց դէմքերի համբերող և բաղդին խոնարհ արտայայտութեամբ, կարող էին գրաւել հասարակութեան համակրութիւնը: Մնացել էին նոյնպէս երկու օտարահայտակներ, մի ռուս եղբիւն և մի անգլիական հպատակ շտապագայի Ֆորբս: Ֆորբսի ներկայութիւնը անհրաժեշտ էր համարված, որպէս զի աւելի դժուարացնելի պոլիցիականների գործը, որոնք այդպիսով ստիպված կը լինէին ոյժ գործ դնել մի այնպիսի երկրի քաղաքացու դէմ, որ մեծ եռանդով պաշտպանում է իր հպատակների իրաւունքները:

Փարիզի եղբիւնների արտաքսելու ձեռք մանրամասնները յայտնի են ընթերցողներին: Պոլիցիական գործակատարները de Sévres փողոցում գտան եղբիւնների «պահպանները» մի ամբողջ խումբ, որ կազմված էր պատգամաւորներից և սենատորներից, որոնց մէջ կար մինչև անգամ արդարութեան նախկին միխտար, պ. Էրնո: Այդ բոլոր պահպանները միմեանց առաջը կորելով և մեծ եռանդով անդադար պնդում էին պոլիցիական գործակատարներին, որ նրանք զեղծում են օրէնքը և յիշնցնում էին այն ծանր պատասխանատուութիւնը, որին Ֆրանսիայում ենթարկվում է այդպիսի զեղծումն գործող իւրաքանչիւր աստիճանաւոր: Այստեղմնայնիւ պոլիցիականները չը շփոթվեցին և շարունակ կատարեցին իրանց ստուած յանձնարարութիւնը: Նրանք ստիպված էին կողպէքներ կտրել, անհնազանդ եղբիւնների

զարբաժնութիւնը, իբրև վաճառականական դասին պատկանող անձինք, որոնք իրենց մի կողմէր հաղարուստեանին հետ չեն փոխել, ոչինչ չէ կարող աւելի կալուածների համար, ըստ որում նա այն ժամանակ պէտք է անվարձ ճանապարհորդութիւններ անի, այստեղ այնտեղ գնայ, իր դուքանից մի քանի օր գրկով, ուստի կալուածական խնդրում նա ոչ մի անվարձութիւն չէր կարող անել Սկզբականին և չարաւ ես, և այդ հանգամանքը միայն պատճառ է Սկզբականին իրեն անգլաւորութեան և անփորձութեան համար, ըստ որում ամենքին յայտնի է, որ ներկայ հոգաբարձուների ընտրութեան գլխաւոր պատճառն ինքն Սկզբականին էր, որը այդ պարագայում, չը շարժվեց բոլորովին անպաշտպան, այլ ընտրել տուաւ այն 3 հոգաբարձուներին (որոնք միակ հոգաբարձու են հաշվում այսօր իրականապէս) միմիայն նորա համար, որ դառա Պապալանեանի հակառակ կուսակցութեան մարդիկ էին: Այժման հոգաբարձութիւնը բաղկացած է 8 անձերից, որոնցից 4-ը նոյն իսկ իրենց ընտրութեան սկզբներում պ. Պապալանեանի պատճառով հեռացել և հրաժարվել են իրենց պաշտօնից, իսկ միւս չորսը—պ. Գ. Հալուսեան, Բէկլարեան—Բաբայեան, Բաշալեան և Թաւրեանց Թաւրեան համարվում են բուն հոգաբարձու, բայց գործողները միայն վերջին երեքն են, իսկ առաջինը—պ. Հ. Հալուսեանը, որ ամենից ազնիւ և միակ բանիմաց անձն է, զի բանտարար մինչ վերջին ժամանակներս ամական հանգամանքները ստիպված, չէր մասնակցում գործերին: Այդ պատճառով միակ ասպարէզը մնացել էր պ. Գ. Բէկլարեանին, Բաշալեանին, Բաբայեանին և Թաւրեանին, որոնք մի մի վաճառականական տիպարներ են ներկայացնում և հոգաբարձութեան քողի տակ ծածկում են իրենց գործերը նոյն իսկ ուսումնարանի վերաբերմամբ: Ում յայտնի չէ Շուշում օր հոգաբարձու պ. Բաբայե Բէկլարեանը ահա մօտ 10 տարի է դրաւել է անհրաժեշտ քաղաքի ամենալաւ տեղում գտնուած ուսումնարանապատկան հողը, չինել է իրեն համար պարտեղ առանց մի կողմէր դաժնաբարութիւն տալով ուսումնարանին: Ում յայտնի չէ, որ նորա բարեկամ Յովսէփ Ղուկասեանը, որն առաջ եղել է հոգաբարձու (Պարզիւն եպիսկոպոսի ժամա-

կրա ձեռք դնել, լսել պատգամաւորների և սենատորների վերաւորանքները:

Մինչդեռ բնակարանի մէջ զլխաւոր դերասանները բարեխղճաբար կատարում էին իրանց դերերը, փողոցում աղմուկ էին հանում և վրդովվում էին կրթված վարձկանները: Պատկերը գեղեցկացնելու համար այստեղ էլ ոչինչ չէր մոռացված: Ամբոխի մէջ նկատվում էին մաքուր, բայց համեստ հագնված կանայք, երեխաները ձեռքին: Նրանք հազիւ էին պահում իրանց արտասուքները: Գտնվեցաւ նոյնպէս մի հարուստ անուանի տիկին, որ կառքով շտապով մօտեցաւ պոլիցիականներին և սկսեց բղաւել: «Գուց ստորութեամբ և անամբօթութեամբ էք վարվում» Նրա պոլիցիականները կամենում էին նրան կալանաւորել, ամբոխի մէջ տանեակ անձինք գտնվեցան, որոնք նրան յանկարծ ձանաչեցին և սկսեցին բղաւել: Ձեռք մի տաք, կոմսուհի դ'Արսկոն է, օտարականուհի: Ձեր մոռացված նոյնպէս հասարակական կանանցով լի կառք: Այդ կանայք բղաւում էին «կորչեն եղբիւնները»: Հասարակական կանանցով լի կառքը եղբիւնները պատրաստել էին, որ զրգուն ամբոխը և աւելի տան հակահանրապետական լրագիրներին ասել, որ փողոցում մարտի 23-ի հրամանների օգտին ձայն տուին մի այն ֆարիզի հասարակութիւնից մեծ վաճառները:

Նկուխները հոգացել էին, որ յունիսի 30-ի արտաքսելի անցքի մասին միայն Ֆրանսիական հակահանրապետական լրագիրները չը խօսեն: Նկուխները մեծ ծարպիկութեամբ կարողացան իրանց կողմը դարձնել աղքեցու թիւն ունեցող օտար լրագիրների թղթակիցներին: Օրինակ Լօնդօնի «Times» լրագրի թղթակից պ. Բլովից եղբիւնների եռանդոտ պաշտպան հանդիսացաւ: Յունիսի 30-ին առաւօտը Փարիզից աշխարհի ամեն կողմերը թռան այնպիսի բովանդակութեան հեռագիրներ, որոնք եղբիւնների համար ցանկալի էին: Պարբայութիւնը աշտովեցաւ կատարելա-

նակ) և այժմ կանդիդատ է, իր հոգաբարձութեան ժամանակ գրաւել է պ. Բէկլարեանի հետ միասին դարձեալ ուսումնարանապատկան դետին և իր համար տուն կառուցել: Թէ պ. Բէկլարեան և Ղուկասեան, իբրև հոգաբարձուներ, իրենց դէմ դատաւոր չեն հանդիսանում, այդ բացառելի է, թէ պ. Բաշալեան և Թաւրեան նոյնպէս չեն հանդիսանում ուսումնարանի իրաւանց պաշտպան ընդդէմ Բէկլարեանի և Ղուկասեանի, իբրև նոյն ամենամեծ աղքեղան, այդ նա բացառելի է և կարելի այդպիսի չարչիների համար, բայց որ Արիստակէս Վ. Սկզբականին է լուում և չէ հետևում յաջողակողներին խել ինչ որ նոքա գողացել են, դա մեզ շատ զարմացնում է, մանաւանդ որ մի քանի ամսից յետոյ կը լրանայ տան տարին, յորմէ հետէ այդ գետնները յաջողակելի են և այն ժամանակ ուսումնարանը կը կորցնի օր և է իրաւունք վէճ բաց անելու: Հաւատացնում ենք: Սկզբականին, որ այդպիսի երկիրեանին քաղաքականութեամբ ոչինչ չի չափել և միմիայն միջոց կը տայ բարեկեցին շարունակելու իրենց կեղտոտութիւնը: Եթէ հոգաբարձու Բէկլարեանը կամենայ, կարող է հինի դնել օրիորդական դպրոցի շինութեան, և դորա համար մենք նորա ջիւղի մի կողմէ անգամ չենք պահանջում, բաւական է, որ նա գործածի այդ շինութեան վրա այն գումարը, որ մի բարեպաշտ մարդ, մեռնելիս յանձնել է իրեն պ. Բէկլարեանին, իբրև իր կտակաւորատարի: Շուշաքաղաքացի պ. Խանգամարեան մեռնելիս կտակել է 32,000 րուբլի, որը և յանձնել է պ. Բէկլարեանին գործածելու աստուածահաճոյք գործի համար: Եթէ պ. Բէկլարեան հասկացող և ազգասէր մարդ է, ինչպէս կամենում են հաւատացնել մեզ ոմանք, նա իբրև հոգաբարձու պէտք է լաւ համոզված լինի, որ Շուշին, իբրև նա քաղաք խիտ կարևորութիւն ունի մի հատ օրիորդական դպրոցի, և ինչ բան կարող է առաւել աստուածահաճոյք լինել, քան իրական սեռի դատարարութեան համար մի սրբաւայր, որտեղ չբաւոր օրիորդներ կարող էին ձրիաբար ուսում ստանալ և անմահացնել կտակողի անունը: Բայց ամբողջ 3 տարի Սկզբական և ուսուցիչներ չեն կարողանում համոզել Բէկլարեանին այդ բանի մէջ:

պէս: Ֆրանսիական կառավարութիւնը կարծես ամաչեցաւ իր համարձակութիւնից: «Պահպանողական» Եւրոպան վրդովեցաւ: Այն շրջանները և մարդիկ, որոնք դեռ երէկ ծափահարում էին եղբիւնների արքայիւն Պորտուգալիայից, Աւստրիայից, Ռուսաստանից և այլն, որոնք դեռ երէկ եռանդով հաստատում էին Իգնատիոս Լոյոյայի հիմնած միաբանութեան սկզբունքների «հակապետականութիւնը», այդ մարդիկ միաձայն սկսեցին պատարակել պ. Թիւր Գրեյի միխտարներին ասելով, որ նրանք վախեցան աւել կոմունայից, և, ամենամեծ չափաւորութիւն պահպանելով, փակեցին եղբիւնական մի քանի միաբանութիւններ, որոնք Ֆրանսիայում օրէնքի հակառակ գոյութիւն ունէին:

«ՄԵՍԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՆԵՐ

10 ՆՆՈՆ, 7 յուլիսի: «Times» լրագիրը հաղորդում է, որ Կարելի դատարկելը սկսված է: «Daily News» լրագրին հեռագրում են Կ. Պօլսից, որ Ազունի մէջ Փոքր Ասիայում (գուցէ Արանա, որ Կիլիկիայի մէջ է) քրիստոնեաների կոտորած է եղել: Ս. ՊԵՏԵՐԲՈՒԳ, 7 յուլիսի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 94 3/8 ր., երկրորդ 92 1/8 ր., երրորդ 93 ր., 50 ր., չորրորդ 93 ր., ներքին 5% առաջին փոխանութեան տոմսակը արժէ 223 ր., 50 ր., երկրորդ 223 ր., արևելեան առաջին փոխանութեան տոմսակը արժէ 91 ր., 75 ր., երկրորդ 91 3/8 ր., երրորդ 91 1/8 ր., օսի 7 ր., 77 ր.: Ռուսաց 1 րուբլ Լօնդօնի վրա արժէ 25 3/8 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա 216 մարկ, 75 պֆ., Փարիզի վրա 267 ֆր. 25 սանտիմ: Բօրսայի տրամադրութիւնը հանգիստ է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

Չէ որ նա գործնական մարդ է և դու ինչ կուզես ասան, բայց այդ փողը իր համար չանցնել ամենալաւն է: Պ, Բէկլարեան անշուշտ մոռանում է, որ այդ փողը մի րոպէ անգամ իր մօտ պահելու իրաւունք չունի:—Սակայն ընթերցողը թող չը կարծէ որ մեր պարոն հոգաբարձուները չունեն ազգասիրական գործեր և ոչ մի օգուտ չեն տուած ուսումնարանին, ոչ, նոքա իբրև վաճառականներ, դիմում են ամեն միջոցի ուսումնարանը հարստացնելու: Համար և յաջողութիւն են գտնում իրենց ձեռնարկութեան մէջ: Հոգաբարձու Բաբայեանը, իր նպատակին աւելի շուտ հասնելու համար, յարմար է համարում ուսումնարանը առևտուրի դուքան լինել և հաւատարմի դուքանական կանոններին նա ամբողջ ժամերով աշխատում է մի կողմէ աւելի հանել խնդրարկուից: Ահա մի խեղճ կին իր օրրի ձեռքից բռնած դիմում է պ. հոգաբարձուին, և խնդրում, որ հոգաբարձութեան կողմից հրատարակված յայտարարութեան համեմատ իր աղքատ օրիուն ընդունեն ի թիւս ձրիավարներին:—Ոչ, ասում է պ. Բաբայե, ես կընդունեմ օրրիդ, երբ դու կը տաս 5 րուբլ:—«Աստուած գիտէ, որ յետին կշուտաւ աղքատ եմ, ոչինչ չունեմ:—Դէ, լաւ, 4 րուբլ 50 կողմէլ տուր:—«Չեմ կարող:— Զը, 20 կողմէլ էլ կը պակասեցնեմ... Եւ այսպէս շարունակվում է մինչև որ 5 րուբլուց իջնում է 2 րուբլի 20 կողմէլ և ընդունում է աղքատ երեխային: Շատ անգամ պ. Բաբայե դարձեալ խնայողութիւն է համարում մի 20 կողմէլ պոկել նորանից, որին հոգաբարձութիւնը վճարել է բոլորովին ձրի ընդունելու: Ի հարկէ, շատերը պ. Բաբայի այդպիսի ջիւղմանը թիւնը վերադարձրում են նորա աստուածապաշտութեան, ուստի և չեն զլանում գովառանք թափել նրա գլխին:

(Կը շարունակվի)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ПО СЛУЧАЮ СЪБЫТА ВО ВСЕ
СЪ КАВКАЗА ЗА-ГРАНИЦУ

Капитанъ князь Константинъ Макаровичъ Орбеліани объявля-
етъ, что продаетъ оставшееся
послѣ смерти отца, Макарія Ор-
беліани, имущество, именно: трехъ-
этажный домъ на Головинскомъ
проспектѣ, съ флигелями, гдѣ
помѣщается гостиница «Россія»,
и имѣнія въ Тифлисской губерніи
и уѣздѣ, именно: деревня Геуа-
ры, населенная жителями, 4,174
десять, Вахлеванъ—450 деся-
тинъ, съ садами, домомъ и при-
стройками; дача въ Коджорахъ,
домъ и земля 2³/₄ десятины;
лѣсъ сосновый, строевой и дубо-
вый 3,100 десятъ, въ Локскомъ
уѣздѣ, Шулаверскаго уѣзда,
около Чатахскаго завода; имѣніе
на Мокрыхъ-горахъ, около моло-
канскаго селенія Воронцовки, подъ
названіемъ Каракала—5,500
десять. Всѣ имѣнія обмежеваны и
имѣются планы; коляска, фаэтонъ,
верховыя лошади, баранта и ро-
гатый скотъ.

3—3

ՅԵՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Յունիսի 30-ից պ. ԳՈՐԻՆՈՎԻ և ընկ
ղեկերի ԽԱՆՈՒԹԻ և ՊԱՆՍՏԸ կը լինի Խի-
ՏԱՐՈՎԻ տանը, Երբեքովի տան ԿԻՅ, որտեղ
գտնվում է նահանգական վարչութիւնը Մու-
գէսի գիմնազի:

3—3

ՄՈՂԴՈՐԻ

Հայոց օրիորդաց դպրոցի համար
պահանջվում է մի վԱՐԺՈՒՆԻ նպաստաւոր
պայմաններով: Ցանկացողները կարող են դի-
մել ՄՇԱԿԻ կամագրատանը պայմանների
մասին բանակցելու համար:

9—10

Համեմատել է անդրիական խանութի թէյն
գինով 1 ր. 10 Կ., 1 ր. 20 Կ., 1 ր. 40 Կ.,
1 ր. 60 Կ., 1 ր. 80 Կ. Փառնտի համար
այն թէյերի հետ, որոնք ուրիշ խանութնե-
րում 30%ով թանկ են ծախվում և այդ
խանութի ֆունդը 2 րուրիանոց թէյը, ու-
րիշ տեղ 4 ր. ծախվող թէյի հետ:

28—100

ՓՈՂԱՍՈՒ ՀԱՇՆԱՊԱՀ

Որ նորերուն է եկել, ցանկանում է տեղ
սեննար: Համարայն է նոյնպէս անցած տարի-
ներից մնացած տարեկան ՀԱՇՆԻՆԵՐԸ կազմել
և թողած ՎԱՅՈՒՍԿԱՆԱԿՆ ԳՐԲԵՐԸ և
ԲԱՆԱՆԵՐԸ կարգի բերել: Հասցէն թողնել
Փարիզ հիւրանոցում № 4:

9—10

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ Ծախվում են
օրհորաֆիական պատկերներ 20% զիջումով
վերաբերուներ 6—70 ր., խոզանակներ պա-
վեհատուրով են լինի մէջ առանձնա ԼԵ
անդրիական խանութի համար, ամենափոքր
ածելիներ, արկղիկով 4 ր., Նեֆիլդի դանակ-
ներ 3—20 ր. դեղինը, բրնձանական մե-
տաղի թէյանաններ 30 Կ.—3 ր., ցիտրա-
մագնեղիա, թիւրքական շերտէթ և ծարաւը
Բաղեցող նիւթ 70 Կ., ամենափոքր պորտ-
ֆէյն և խերես 1 ր. 40 Կ. շերտ, շամպայն
3 ր. շերտ:

20—20

ԳԵՐԱՋԱՆՑ ԱՆՈՒՐ 2-որդ ՏԵՍԱԿԻ

Պատաստված մարտը ցորենից առանց
թեփի ր բերված է Նյակից և ծախվում է
Կուկիայում նոր բացված պահեստում, Նիւ-
գաղէտինսկի փողոց, տուն Գաննաօվի, Փոթի-
Քիլիխան երկաթուղու վարչութիւնից ոչ
հեռու: Նոյն տեղ ծախվում է նոյնպէս Նյա-
կից բերած և Փոթիում պահվող 5000 պուդ
մարզված գարի:

5—5 (2)

ՄԵԿ ԵՐԻՏԱՍԱՐԴ, որ գիտէ
հայերէն, ռուսերէն և ֆրանսերէն
լեզուներ, կամենում է ԿԼԵ-
ՏՈՐԸՉԻԿԻ ԳՈՐԾԵԿԵՆՏԻ-
Ի կամ թարգմանի տեղ ունե-
նալ: Ցանկացողները կարող են
գիմել «Մշակի» կամագրութեանը:

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՄԱՆԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՆԻՈՒԹԻՒՆԸ ԱՌԱ-
ԽՈՏԱՆ 9-ից ՄԻՆՁԵՒ 1 ԺԱՄԱՆ:

Երկուշաբթի. Գաղթողների կանանց
հիւանդ. Գորալե վիլ Ներքին հ. Բօտի-
նեական կանանց և երեխաների հ. Բիւլ-
նեական խորհուրդական և աշխատի հ.
Ետեմբօրսկի վերնական և կաշու հ.
Բաբայեան ջրային և հողական հ.:

Երեքշաբթի. Մինի վիլ խորհու-
րդական հ., Վգորով վերնական և բողա-
ղի հ., Իէյլ աշխ. հ., Բալսոնով
մանկաբարձական, կանանց և երեխաների հ.,
Կրասնօգլեա գօլ. Լիսիցե վ. և Վ. Բ-
միշե վ. ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցե վ. և Բուդ-
վովսկի ներքին հ., Ետեմբօրսկի
կենդանական և կաշու հ., Աստուածատու-
րով կանանց հիւանդութիւններ:

Հինգշաբթի. Վգորով վերնական և
բողաղի հ., Բօտինեական կանանց և երե-
խաների հ., Լիսիցե վ. և Վ. Բմիշե վ.
ներքին հ., Բիւլնեական և Նիւքիլիսի
սեփական օրդանների հ.:

Ուրբաթ. Գաղթողների կանանց հ.,
Մինի վիլ խորհուրդական հ., Կրասնօ-
գլեա գօլ. և Լիսիցե վ. ներքին հ., Բա-
լսոնով մանկաբարձական, կանանց և ե-
րեխաների հ., Ետեմբօրսկի և Աստ-
վածատուրով վերնական և կաշու հ.,
Բաբայեան ջրային և ներքին հ.:

Երաթթի. Լիսիցե վ. և Վ. Բմիշե վ.
ներքին հ., Բաբօվ կուրծքի հ., Ետեմբօ-
վսկի վերնական և կաշու հ.:

Բացի այդ բոլրից Վգորով բժշկանոցի
մէջ ընդունում է անվարձ աղքատ հիւանդ-
ներին ամենայն օր երեկոյան 4—6 ժամը:

Բժիշկ Բաբայե վ. չորեքշաբթի օրերը ա-
ռաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդու-
նում է իր տանը բժշկանոցի հիւանդներին
էջկարգի կամ բժշկութեան և ներքին հ.

Համար: Բնակարանը գտնվում է Սերգիլեւ-
կայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:
Առաջադրութ 0 ր. Եւս աղքատ հիւան-
դներին բժշկանոցի տոմսով ընդունում է
ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առա-
ւօտեան 9—11 ժամը բժշկանոցում ընդունում է
մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու
համար:

Բժշկանոցի գիրկնոր Լիսիցե վ.:

Մամուլի տակից դուրս եկաւ հրատարակութեամբ (2
ԳՐԻԳՈՐԵԱՆՅԻ) Կովկասեան Գրախաւաւանոցի և ծախ-
վում է բացառապէս նոյն տեղը:
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ ձեռ-
նարկներ աշխատասիրութեամբ Ն. ՍԻՄԻՈՆԵԱՆՅԻ:
Ե. ՏԱՐԻ նախադիտելիք (իբրե հայերենագիտութեան դա-
սերի օրինակ տրուած է թիֆլիզի հայերենագիտութիւնը),
հինգ պատկերներով, գինն է 35 կոպ.
Բ. ՏԱՐԻ մասն ուսումնական և բնական երեսուն և մէկ
պատկերներով, գինն է 60 կոպ.
գումարով աւանդներին գիջումն կը լինի: Մամուլի տակ
է Գ. ՏԱՐԻ, մասը բաղաբական:

1—20

Եղեքանդրապօլու երկսեռ դպրոցաց բարձր դասա-
տանց համար հարկաւոր է եկող ուսումնական տարուան
համար ուստաց լեզուի մի ուսուցիչ, որ աւարտած լինի
որ և է բարձրագոյն դպրոցում, շաբաթական 24 դասով:
Ցանկացողները իրանց պայմանները կարող են յայտնել
երկսեռ դպրոցների հոգաբարձութեանց:
Սարգիս Միրզայեանց.
Հոգաբարձուր Եսատուր Իսահակեանց.

Բաղաբային ուսումնարանական մասնաժո-
ղովը յայտնում է, որ սեպտեմբերի 1-ից կը
բացվին թիֆլիսի մէջ Արհեստական և քա-
ղաքային սկզբնական ուսումնարաններ: Աշա-
կերանների ընդունելութիւնը ինչպէս առա-
ջին, նոյնպէս և երկրորդ ուսումնարանում
կը սկսվի օգոստոսի 15-ին: Նորիքները հա-
սարակ թղթի վրա և ուսումնարանական
մասնաժողովի անունով գրված, որովում են
քաղաքային վարչութեան հերթական անդա-
մին ամենայն օր առաւօտեան 10—12 ժամը:
Նորիքի հետ պէտք տրվին մետրիկական և
ծաղիկ պատուաւորու վկայականները և
որոշ նշանակված պէտք է լինեն բնակու-
թեան տեղը և տան պոլիցիական համարը:
Սկզբնական ուսումնարանի մէջ ընդունվում
են 8—14 տարեկան երեխաներ և նրանցից
ոչինչ գիտութիւն չէ պահանջվում: Արհես-
տական ուսումնարանը մտող երեխաների
հասակը որոշվում է 12—16 տարեկան:
Երեխաները ամուր կազմվածք պէտք է ունե-
նան ու առաջին դասատուն մտնելու համար
նրանցից պահանջվում է. Կրօնից-քրիստոնէ-
ական վարդապետութեան կարճատե հրա-
հանգները և սրբազան պատմութիւն, ուս-
տաց լեզուից-կարդալ, գրել և կարդացածը
պատմել, հայերի և վրացիների համար նոյ-
նը իրանց մայրենի լեզուով, թուրքանու-
թեանց-առաջին 4 գործողութիւնները և
պարզ խնդիրների մտաւոր լուծումը, ժամա-
նակի, դրամի, կշեռքի և այլ չափերի գիտե-
նալը:

Յունիսի 1-ից ՎԱՐԺԱՎՍԿԱՍ ՊԵԿԱՐԻՒՍ-
ՅԻՆ կից կը բացվին ՍԵՆԵԱԿԵՐ, որտեղ
կարելի կը լինի ստանալ ԿԱՅԷ, ԵՇՈՒԱԳ,
ԹԷՅ և պարտատված հանքային զանազան
ԲՁԻՅ:

20—40

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառ-
վում է Զար. Գրիգորեանցի Կովկասեան գրա-
վաճառանոցում Ընդհանուր աշխարհագրու-
թիւն. Ա. տարի, Նախադիտելիք (հայերենա-
գիտութիւն թիֆլիսի) 5 պատկերներով:
Աշխատասիրութիւն Ն. Սիմոնեանց: Դինն է
35 կոպ. գումարով աւանդներին 20% զիջումն
կը լինի:
Մամուլի տակ են, Ընդ. Աշխ. Բ. տարի,
մասն ուսումնական (մասնաւորական) և
Բնական և ընդ. Աշխ. Գ. տարի, մասն քաղա-
քական: Վերջին երկու գրքերի տպագրութիւնը
աւարտելուց յետոյ կը հրատարակուեն նոյն
գինը: Սարգիս Միրզայեանց գիմում են:
Եւ Թիֆլիս. Կաւկասեան քնիյան
տրոյալ Յ. Ս. Գրիգորեան.

20—20

ՎԵՐՋԵԱԿԱՆ ՎԱՅՈՒՆՈՒՄ

Հրացաններ, լեզվիկներ, դանակներ, գրիչ-
ներ, անուշահոտութիւններ, սապոն, դուլ-
պաներ, թաշկինակներ և այլն, ԱՆԳԼԻԱԿԱՆ
ՄԱԳԱՍԻՆԱԿ:

18—20

На Воронцовской Набережной,
въ домѣ Г-жи Варламовой отда-
ется въ наемъ квартира о 5 ком-
натахъ, съ кухней, большою
конюшнею и сараемъ. Объ усло-
віяхъ спросить въ Тифлисской
Городской Управѣ.